

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐՍՅՐԻ» ԵՎ ՌԱՓԱՅԵԼ
ՊՍՏԿԱՆՅԱՆԻ «ՔԱՋ ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆԻ ՄԱՀԸ» ՊՈԵՄՆԵՐԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանայի բառեր – աշխարհաբար, պատմաքաղաքական ճակատագիր, հերոսական անցյալ, Ավարայրի ճակատամարտ, հայ ազգային-ազատագրական պայքար, դիմառնություն, երգասաց բլբուլ

Հայ գրականության և մշակույթի պատմությունը հարուստ է հանճարեղ անհատներով, սակայն քչերին է հաջողվել իրենց բազմաշնորհ ունակություններով հավասարապես փայլել հայագիտության տարաբնույթ հարթակներում: Այդ եզակի երևելիներից մեկը հայ նոր գրականության պատմության և հայագիտության համապատկերում կարևոր տեղ զբաղեցնող Ղևոնդ Ալիշանն (1820-1901) է:

«Բոլոր բանաստեղծների Նահապետը»*, լինելով հայ աշխարհաբար պոեզիայի հիմնադիրը, ինչպես նաև այդ ասպարեզի ականավոր ներկայացուցիչներից մեկը, անխոնջ նվիրվածությամբ շարադրեց նաև հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության բազմաթիվ ծավալուն հատորներ, որոնք հատկանշվում են հայ ժողովրդի պատմական անցյալի գրեթե բոլոր ժամանակաշրջաններին և բնագավառներին առնչվող փաստերի հսկայական նյութով: Այս իմաստով ուշարժան են Ավ. Իսահակյանի՝ սրտաբուխ հուշերի պատառիկները. «... առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը... Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն»¹:

Հայ գրականության Նահապետի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված ներկա ուսումնասիրության մեջ արդիական մոտեցումների, պատմա-համեմատական և գուգադրական մեթոդների կիրառմամբ դիտարկելու ենք նրա «Պլպուլն Ավարայրի» պոեմը:

Ալիշանը, իր բանաստեղծական ինքնատիպ ժառանգությունը ստեղծելով 1840-1852 թթ., հետագայում այն ամփոփեց 1857-1858 թթ. հրատարակված «Նուագք» ընդհանուր խորագիրը կրող բանաստեղծական ժողովածուի հինգ՝ «Մանկունի», «Մաղթունի» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի», «Տխրու-

* Ղ. Աղայանի բնորոշումն է: Տե՛ս «Տարագ», 1890, ապրիլ, թիվ 4:

¹ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 10-11:

նի» հատորներում¹: Հատկանշական է, որ նրա բանաստեղծական ժառանգության մեջ շահեկանորեն առանձնանում է «Հայրունի» հատորում տեղ գտած «Երգք Նահապետի»՝ աշխարհաբարով գրված տասնմեկ պատմահայրենաշունչ քերթվածներից բաղկացած շարքը: Քերթվածաշարը պատմական բեկումնային նշանակություն ունեցավ ոչ միայն բանաստեղծի, այլև հայ գրականության համար, որովհետև Ալիշանը, կենսականության արձագանքներով վերաիմաստավորելով Մխիթարյան միաբանության կլասիցիստական պոեզիայի լեզվամտածողությունն ու ձևաբովանդակությունը, ուրվագծեց մեր բանաստեղծության զարգացման հետագա ճանապարհը:

Ուշարժան է, որ Մ. Նալբանդյանը, 1859 թ. ամռանն այցելելով Փարիզի Մուրադյան վարժարան, հանդիպել է Ղ. Ալիշանին: Վերջինս 1858-1861 թթ. ընթացքում զբաղեցնում էր Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը: Հետագայում Նալբանդյանը, իր «Հիշատակարանում» պատմելով այդ ծանոթության մասին, խստորեն քննադատում է Մուրադյան վարժարանի ծայրահեղ կրոնական մթնոլորտը, խտրական վերաբերմունքը *«բուն հայկական կամ ավետարանական հայերի զավակների»* նկատմամբ², մինչդեռ Ղ. Ալիշանին ներկայացնում է միայն դրվատանքով. *«Ինձ շատ հարգելի է հայր Ղևոնդի անձը... Այս արժանապատիվ անձը ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետի անունով: Հ. Ղևոնդ Ալիշանյանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր ավելի պարզ և վառ երևել, եթե արեղայական սևաթույր վերարկուն չլիներ խափանադիթ»*³:

Հայ նոր գրականության արշալույսին Մ. Նալբանդյանը, վերստին անդրադառնալով Ալիշանի քերթվածներին և սրատեսությամբ որսալով նրա բանաստեղծության կենսահաղորդ ազդակները, «Կրիտիկա. «Մոս և Վարդիթեր»» աշխատության տողատակի ծանոթագրություններում վերջինիս մասին գրում է. *«Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածները - «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը. ...չափաբերական քերթվածոց մեջ, արժանավոր վարդապետը ախոյան չունի. եթե մենք լռենք, Ավարայրի բլբուլը կխոսի...»*⁴:

Գրասեր հասարակությունը Ալիշան բանաստեղծի մասին առաջին անգամ իմացավ 1847 թ. ամռանը, երբ «Բազմավեպում» «Նահապետ» ստորագրությամբ տպագրվեց անսահման հայրենասիրությամբ տոգորված նրա

¹ Տե՛ս Հ. Ղևոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուազք, Ա, Մանկունի, Վենետիկ, ի Մուրբ Ղազար, ՌՅԶ-1857, Նուազք, Բ, Մաղթունի, Բնունի, ՌՅԶ-1857, Նուազք, Գ, Հայրունի, ՌՅԷ-1858, Նուազք, Դ, Տերունի, ՌՅԷ-1858, Նուազք, Ե, Տխրունի, ՌՅԷ-1858:

² Տե՛ս Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 358-359:

³ Նույն տեղում, էջ 365:

⁴ Նույն տեղում, էջ 524:

«Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը¹, իսկ նույն թվականի աշնանը՝ նաև «Պլպուլն Ավարայրի» պոեմը²:

Ո՞վ էր այս «Նահապետը»³, որտեղի՞ց էր նա գալիս և ի՞նչ էր ցանկանում հաղորդել ներկա և ապագա սերունդներին: Գրական ծածկանվան ընտրությունը պատահական չէր. Ալիշանը տակավին քսանյոթ տարեկան էր, սակայն ուզում էր նահապետի տարիքին հարիր ողջախոհության և իմաստության դիրքերից նոր սերունդներին պատմել իր հայրենիքի գեղեցկություններին, ինչպես նաև դառնադի պատմության մասին և նրանց պատգամել անհագ հայրենասիրություն: Ալիշանը, ստեղծելով «Հայութեան մեծ-հայրիկի, հայ հին փառքերուն ոսկին արդի ակերակներուն մոխիրին մեջէն փնտռող, հայ ազգին բոլոր պարծանքներն ու ցաւերը, յոյսերը երգող, ողբացող, օրհնող Ծերունիի տիպարը», մտքով և սրտով միշտ երիտասարդ մնաց մինչև իր կյանքի մայրամուտը⁴:

Հեռավոր Սուրբ Ղազար կղզում ապրող և ստեղծագործող Ալիշանին մտահոգում էր իր ժողովրդին պատուհասած պատմաքաղաքական ծանր և դառնադեմ ճակատագիրը: Ի՞նչ էր սպասվում հայ ժողովրդին, եթե նա օրինակ չվերցնէր հերոսական անցյալից և նույն ոգով ու առնականությամբ չպայքարէր ներկայում: Անցյալի մասին մտորումները Ալիշանին տանում են V դար, և նրա աչքի առջև հառնում է 451 թ. Ավարայրի ճակատամարտը, որը հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից է:

Ավարայրի խորհուրդը հայ ժողովրդի գիտակցության մեջ դաջվեց որպես ազատության և անկախության համար մղվող պայքար: 387 թ. Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև անհամամասնորեն բաժանված Հայաստանի համար այդ ճակատամարտն ուներ զուտ բարոյական նշանակություն: Հայ ժողովուրդը իր համառ կամքի և հերոսական պայքարի շնորհիվ հաստատեց ոչ միայն իր հարատև գոյության իրավունքը, այլև առաջ մղեց ինքնուրույն մշակույթ ստեղծելու դժվարին գործընթացը: Թեև հայ ժողովուրդը չհաղթեց այդ պայքարում, բայց, այդուհանդերձ, իր ցուցաբերած անձնուրաց պայքարի և հերոսականության արդյունքում ձեռք բերեց քիչ թե շատ խաղաղ երեսուն տարիներ: «Քանզի ոչ էթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»⁵,

¹ Տե՛ս «Բազմավեպ», 1847, յունիսի 15, թիվ 12, էջ 183-188:

² Տե՛ս «Բազմավեպ», 1847, հոկտեմբերի 1, թիվ 19, էջ 295-300:

³ Ղ. Ալիշանի գրական ծածկանվան մասին սպառիչ բացատրությունները տե՛ս **Զրբաշյան Էդ.**, Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 22-46:

⁴ Տե՛ս «Անահիտ», 1902, ապրիլ, թիվ 4, էջ 79:

⁵ **Եղիշէի**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 119: Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերը պարտություն կրեցին: Տե՛ս **Եղիշէ**, Ե դար, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1994, էջ 86:

անաչառ դատողությամբ եզրակացնում է Եղիշեն:

Ավարայրի խորհուրդը քննարկելիս հարկ է նկատել, որ Վարդանանք իրենց նահատակությամբ անձնագոհության և հայրենասիրության օրինակ դարձան ապագա սերունդների համար: Ավարայրի նշանակությունը ավելի խորքային բովանդակություն ունի, ըստ որի՝ ժողովրդի մեջ դաստիարակվում է հավաքական ուժի, ազգային արժեքների գնահատման, դրանց շուրջ համախմբման և վերջիններիս պահպանության համար զոհաբերության պատրաստ ոգի և գիտակցություն, որը, օրախնդիր լինելով XIX դարի առաջին քառորդում, որոշ իմաստով խիստ արդիական է նաև այսօր, որովհետև հայ ժողովուրդը դեռևս չի նահանջել իր ապագա սերունդներին մի բուռ հայրենիք կտակելու սուրբ առաքելությունից:

V դարից մինչև XIX դարի առաջին քառորդը շատ ժամանակ էր անցել, սակայն հայ ժողովուրդը դեռևս չէր խաղաղվել դարավոր պատերազմներից: Ռուս-պարսկական, ռուս-թուրքական արյունահեղ պատերազմներն ավերել էին Հայոց աշխարհը, իսկ նրա որդիներին՝ դարձրել գաղթական: Թեև ժամանակները և թշնամիները փոխվել էին, սակայն նույնն էր մնացել ազգապահպանման համար մղվող պայքարը: Հայ ժողովուրդը երազում էր մեկընդմիջտ ազատագրվել թուրք-պարսկական ծանր տիրապետությունից և վերադառնալ բնականոն զարգացման ընթացքին: Այս բոլոր տենչերն ու երազանքները, թևածելով Ղ. Ալիշանի մտքում, ուրույն դրսևորում ստացան «Պլպուլն Ավարայրի» պոեմում:

Ալիշանը, այստեղ կիրառելով հայ գրականության մեջ արդեն հայտնի դիմադրության, այն է՝ բնության երևույթները շնչավորելու գեղարվեստական հնարանքը, «գրուցում է» լուսնի հետ.

*Ո՞նց գաս իմ լուսնյակ, հեզիկ ու հանդարտ
Համաափյուռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի Նահապետ, որ մըտոք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ Ավարայր,
Ուր քաջ ու աննրման հարք մեր հայկազունք
Ընկան զետ հրսկա, կանգնեցան զվարթունք...¹*

Լայն իմաստով սա այդքան էլ զրույց չէ, այլ մի հեղինակային մտորում: Ալիշանը ամեն կերպ փորձում է իր խոհերին և մտածումներին հաղորդակից դարձնել լուսնին: Եթե Նահապետը «մըտոք մոլար» է շրջում Ավարայրի դաշտում, ապա նույն բախտն է վիճակվել նաև լուսնին, այն տարբերությամբ միայն, որ վերջինս, լինելով երկնքի հավերժ ճամփորդ, «երկնուց ի վար» տեսել է Հայոց աշխարհի հերոսական անցուդարձերը:

Շարունակելով կիրառել գեղարվեստական նույն եղանակը՝ Ավարայրի

¹ **Ալիշան Ղ.**, Երկեր, բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Շտիկյանի, Երևան, 1981, էջ 43 (այս հրատարակությունից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն շարադրանքում՝ փակագծի մեջ նշելով միայն էջը):

ճակատամարտի և նրա հերոսի մասին խորհրդածող Նահապետը դիմում է նաև «տրտում ու արյունուտ» Տղմուտ գետին, «Մակուա քարեն» և «ծեր Մասյաց սրբազան սարեն» եկող «հովիկին», իսկ վերջում՝ «այրած սրբտերու քարեկան» սոխակին.

*Դու այլ, ո՛վ Տրղմուտ, տրտում ու արյունուտ
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուտ,
Եվ հովիկդ՝ որ գաս ի Մակուա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սրբազան սարեն...
... Ո՛հ դու քարեկամ այրած սրբտերու,
Խոսնակ գիշերո, հոգյակ վարդերու,
Երգե՛ պըլպուլիկդ, երգե՛ ի սարեդ,
Չանմահ քաջքն հայոց՝ երգե հոգվույս հետ... (էջ 43-44):*

Հաջորդող տողերում ակնհայտ է դառնում, որ «քաղցրագրուցիկ պլպուլը» Եղիշեի հոգին է: Նա, ձմեռն անցկացնելով անապատում, ամռանը գալիս է Ավարայրի դաշտ և ձայն տալիս Վարդանին: Գողտրիկ այս պատկերի միջոցով Ալիշանն իր պոեմում գեղարվեստականացրել է Ավարայրի ճակատամարտի երկու հերոսներին, որոնց հայրենասիրական ամրակայուն գաղափարները դարեր ի վեր ուսանելի էին հայերի համար:

Ալիշանի պոեմի տպագրությունից տասնչորս տարի անց՝ 1861 թ., «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում Գամառ-Քաթիպա¹ գրական անունով լույս է տեսնում «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»² պոեմը: Հատկանշական է, որ հայկական ժոմանտիզմի վաղ շրջանի առաջավոր այս ներկայացուցիչները, հայ ժողովրդի ծանր օրերի շուրջ ունենալով նույն մտահոգությունները, ընտրել են պատմական միևնույն դրվագը, սակայն բոլորովին տարբեր մոտեցումներ կիրառել դրա նկատմամբ: Ինչպես Ալիշանի, այնպես էլ Պատկանյանի համար V դարի դրվագը միջոց էր իրենց օրերի խնդիրներին պատասխաններ գտնելու համար:

Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, ի տարբերություն «Պլպուլն Ավարայրի» քերթվածի, ունի հատուկ առանձնացված

¹ Ռ. Պատկանյանը 1854 թ. Մոսկվայում հիմնադրում է «Գամառ-Քաթիպա» անունով հայ գրական առաջին ընկերությունը, որի անունը կազմվել էր գաղափարակից ընկերների (Գևորգ, Մնացական, Ռափայել) անունների՝ ԳաՄաՌ սկզբնատառերով ու ա հողակապով և Քանանյան, Թիմուրյան, Պատկանյան ազգանունների՝ ՔաթիՊա սկզբնատառերով: 1857 թ. նյութական դժվարությունների պատճառով հայ հանրությանը որոշակի ծրագրով գրագիտացնելու, նրան հայրենասիրական ոգով դաստիարակելու և ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստելու նպատակներով ոգեշնչված այդ ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ «Գամառ-Քաթիպա»-ն դարձավ Ռ. Պատկանյանի գրական ամենատարածված անուններից մեկը: Նա հանդես է եկել նաև «Աշուղ Կարապետ», «Սյուլուկ», «Ախտամերկյան» և այլ ծածկանուններով: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Հովակիմյան Բ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 115, 59, 402, 48:

² Տե՛ս «Կռունկ հայոց աշխարհին», 1861, յուլիս, թիվ 7, էջ 313-330:

«Նախերգանք», որտեղ քնարական հերոսը՝ «մուսային պարկեշտ որդեգիր» Ռ. Պատկանյանը դարձյալ դիմառնության եղանակով հետաքրքրվում է «երկնից կամարի գեղ» լուսնի այլայլված դեմքի գաղտնի պատճառներով.

*Ո՛վ լուսի՛ն, լուսի՛ն, էլ քանի՞ էդպես
Դալկացած, տրժգուն, տրխուր երևես.
Այդ թխսպոտ ամպե՛րն քեզ զարհուրեցին,
Բոցոտ կայծակնե՛րն քեզ այլայլեցին.
...Մի՞ թե նախանձից թափել է գույնըդ,
Չէ՛, ուրիշ գաղտնիք ունիս սրբտումրդ:
Ասա՛ ինձ, լուսին, ասա սրտաբաց,
Ինչո՛ւ է, ինչո՛ւ դեմքըդ այլայլած...¹*

«Դալկացած և տրժգուն» լուսինը դարեր շարունակ երկնքում «ունայն շրջելով», փնտրել էր «ըզգայուն հոգվով» այն մեկին, որին կարող էր պատմել իր սրտի գաղտնիքը: Նախկինում ոչ ոք հայացքը երբեք չէր հառել լուսնին և չէր հետաքրքրվել նրա տխրությամբ, մինչդեռ լուսինը «մայրագութ ինամքով» պահել է այլոց գաղտնիքները: Լուսնի սրտին ծանրացած անամոք ցավը ընկալելի է միայն սփոփանքի կարոտ բանաստեղծին.

*Լուսինը դող-դող ամպեր ճեղքելով,
Ինձ պատասխանեց լալազին ձայնով.
«Լըսե՛, մուսային պարկեշտ որդեգիր
(Թե՛ գըլխուս անցքին ես հետաքրքիր),
Շատ դարեր դես ու դեն ունայն շրջելով
Քեզ միայն գրտա ըզգայուն հոգվով:
Բայց մինչև այսօր չի գտա ոչ ոք
Որ իմ տխրության տաներ քիչ մի հոգ.
Ոչ ոք չը խըլեց դարդը իմ սրտից
Շատ դար ինձ ոչ ոք չեղավ կարեկից...
...Ի՞նչ սեր ես խընդրում մարդկության ցեղից,
Ե՛րբ վարդ է քաղվել տատասկոտ տեղից,
Մերը նըմանից պետք է պահանջել» (էջ 61):*

Այս երկու պոեմները հատկանշվում են գրական աղերսներով, որն ավելի ակներև է հայի ծագումնաբանությունն ամբողջությամբ ներկայացնող ալիշանական երկտող բնաբանից.

*Ի հոն են ծնել մեր հարքն առաջին,
Որ ետ Ադամա գաստված օրհնեցին (էջ 62):*

Թե՛ Ալիշանի և թե՛ Պատկանյանի համար լուսինը պատմության լուռ վկան է: Երկու տեղերում լուսինն է պատմում Ավարայրի ճակատամարտի

¹ Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1980, էջ 60 (այս հրատարակությունից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն շարադրանքում՝ փակագծի մեջ նշելով միայն էջը):

մասին: Պոեմների գուգադրական վերլուծությունն ի հայտ է բերում մի շատ էական տարբերություն. Ալիշանի օրերի լուսինը ներկայանում է *«ամպի տակ բացխփիկ խաղայր»* տեսքով, այն է՝ ամբողջությամբ չէր ծածկվել սև ու մռայլ ամպերով և ժամանակ առ ժամանակ լուսավորում էր Հայոց աշխարհը, մինչդեռ Պատկանյանի հետ *«գրուցող»* լուսինը հազվադեպ էր երևում մարդկանց: Լուսնի պատմության ավարտից հետո Պատկանյանն *«ամեն իրիկուն»* սպասում էր նրա *«խաղաղ ծագելուն»*: Գեղարվեստական պատկերների ակնհայտ տարբերությունները կրում էին բանաստեղծների կենսական միջավայրերի կնիքները. եթե Ալիշանը, հայրենիքից հեռու լինելով, Թորգոմյան որդիներին պատկերացնում էր Վարդանի հերոսական ողջախոհությամբ, ապա Պատկանյանը քիչ թե շատ մոտ էր Հայաստանին և տեսնում էր, որ իր սերնդակիցները, կորցնելով նախնիների հերոսական ոգին, սկզբում հպատակվում էին թուրք-պարսկական, իսկ հետո՝ ռուս-թուրքական տիրապետություններին:

Հարկ է նկատել, որ Ալիշանը հակադիր համեմատություններով է նկարագրում Ավարայրի վճռորոշ ճակատամարտի նախընթաց խռովահույզ, արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ չարագուշակ գիշերն ու պատերազմող կողմերին.

*Կես գիշերն առել էր գիշերավար,
Լուսնակն ամպի տակ բացխփիկ խաղայր.
Մինչ հովըն շրրջկոտ կախ թևոքն անտառ
Օդոց և ծառոց հանգիստ կու կարդայր...
... Մեկ գունդն է պարսից հազար ու հազար
Որոնց վրա ամպ տարածի խավար.
Մեկ գունդն այլ հայոց է՝ թըվով ցանցառ.
Լուսնի լույսով զենքըն փայլին վառ վառ (էջ 45):*

Հայոց և պարսից բանակների՝ ալիշանական վերոհիշյալ հակապատկերը հավաստում է այն մասին, որ հայ ժողովուրդը, երբեք չնահանջելով քրիստոնեական իր հավատից, միշտ արդարացի պայքար է մղել իր ազգային դիմագծի պահպանման համար, և նրա գոյության ուղին միշտ լուսավորվել է այդ անշեջ և մշտարթուն պահող լույսով: *«Ալիշանը սիմվոլացրել է երկու իրարամերժ ուժերի՝ ազատության և բռնության հակամարտը, ընդգծելով Ավարայրի դաշտում հայ ժողովրդի մղած պայքարի առաջավոր, ազատագրական բնույթը»*¹, – իրավացիորեն նկատում է Ա. Ինճիկյանը:

Այլ է պատկերը Ռ. Պատկանյանի պոեմում: Նա անհուն կսկիծով ներկայացնում է «Լուսնի պատմությունը»: Հայ ժողովրդի ներդաշնակ կենցաղի և երբեմնի շեն ու նորոգ քաղաքների նկարագրություններից հետո լուսինը ավելի գորշ ու մռայլ գույներով է պատմում այն գիշերվա մասին, որի լուսա-

¹ Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1962, էջ 491:

բացը հատկանշվելու էր Վարդանանց սխրագործությամբ.

*Սև ծուխ է պատել հայոց երկրնքին,
Գեղեր, քաղաքներ տված կրրակին,
Անողորմ էրվում, տոչորվում էին,
Բոցեղեն լեզուքն հասնում ամպերին,
Դժոխք էր տեսիլն խեղճ հայոց երկրին... (էջ 63):*

Ալիշանի պոեմում առերևույթ երևացող հանգստությունը հարաբերական է. թե՛ պարսկական և թե՛ հայկական բանակաները նախապատրաստվում էին հաջորդ առավոտ կայանալիք վճռական ճակատամարտին: Գիշերվա կեսին լուռ ու մտասույզ Վարդան Մամիկոնյանը շրջում է դաշտում: Այդ պահին նա մտածում էր նենգամիտ թշնամու դեմ պատերազմի պատրաստվող վաթսուն հազար քաջ հայրենասերների մասին: Այս պատերազմը առաջինը չէր. Վարդանը նույն զգուշավորությամբ «*հիսուն հաղթանակք*» էր շահել «*քրրտընքով*» և դուրս շարտել ոսոխին հայրենիքի սահմաններից: Սակայն այդ փորձառությունը չէր խանգարում Վարդանին, որ նա ևս մեկ անգամ վերլուծեր ստեղծված ծանր և օրհասական իրադրությունը:

Վարդան Մամիկոնյանի մտասույզ կերպարի ալիշանական գեղարվեստականացումն աչքի է ընկնում կրկին հակադրամիասնությամբ, այսինքն՝ արտաքին հանգստությունը հակադրված է ներքին անհանգստությանն ու լարվածությանը: Հեղինակը, նուրբ քնարականությամբ զարգացնելով պոեմը, հասցնում է այն աստիճանի, որ ընթերցողի մտապատկերում ստեղծվում է գիշերային Ավարայրի մռայլ տեսարանի շարժանկարը, որը քիչ գրողների է հաջողվում: Այս իմաստով գրականագետ Ս. Շտիկյանը իրավացիորեն գրում է. «*Հեղինակը հաջողությամբ կարողացել է հասնել այն բանին, որ շարադրանքի ընթացքում առերևույթ հանդարտության ներքո, ստեղծվի հոգեբանական զգալի լարում, հուզումնալից վիճակ, և այդ ամենը առանց մնացորդի փոխանցվի ընթերցողին*»¹:

Վարդան Մամիկոնյանը Պատկանյանի համար ամենից առաջ մարդ է՝ իր բոլոր առավելություններով և թերություններով հանդերձ: Նա, լինելով առողջ բանականության տեր անհատ, լավ է գիտակցում իր ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման ճոճվող վտանգը: Ժողովրդի սերն ու հարգանքը երբեք չմեծամտացրին Վարդանին: Վերջինս չի մոռացել ժողովրդի նկատմամբ ունեցած սպարապետական սուրբ պարտավորությունը: Դիտելի է, որ քաղաքական գործչի նրա նկարագիրն ու մարդկային տեսակը շատ ընդհանուր եզրեր ունեն: Նա չէր կարող իր անձնական հանգամանքներին տուրք տալ և բախտի քմահաճույքին թողնել իր ժողովրդին: Վարդանը, մի կողմ թողնելով իր անձն ու ընտանիքը, ազգի կենաց-մահու խնդիրը իր և զինակիցների համար *վճռեց կա՛մ հաղթանակի, կա՛մ մահվան ելքի երդումով*.

¹ Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, էջ 131:

*Չըկարաց տանել նորա վեհ հոգին
Կրոնի հալածմունք սիրելի ազգին
Թըրոսն ու խաչով տվեց մեծ երդում –
Հաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում (էջ 64-65):*

«Պլպուն Ավարայրի» պոեմի երկրորդ գլխում էպիկական շնչով ներկայացվում է բուն ճակատամարտի հերոսական նկարագրությունը: Երկու բանակները գլխակորույս բախվում են միմյանց, և մարդկային ոտնատրոփից թնդում է Ավարայրի դաշտը: Մարդկային այս ամբոխի միջով սրընթաց անցնում է հայոց սպարապետը, որը, ավելի ոգևորելով բանակի զինվորներին, նրանց նորանոր սխրանքների ոգի է տալիս, իսկ նրանց, ովքեր հուսահատվել էին, Վարդանը հորդորում էր քաջ ու անսասան մնալ:

Պատկանյանի պոեմում Վարդանի՝ «*իր բուռ քաջերուն*» դիմելու «*դեմծիծաղ*» խոսքն ունի մի փոքր ավելի հուզախառն և զգացմունքային բնույթ, որը պայմանավորված է ոչ միայն իր ընտանիքի, այլև հայության հետագա ճակատագրի մասին մտորումներով.

*Առանց հայրենյաց մեզ մութ է աշխարհ,
Հայաստան էր մեր միակ մըխիթար.
Կորավ Հայաստանն, էլ ի նչ հույս մընաց,
Մեր կյանքըն ի նչ է, թե ոչ սուգ ու լաց.
... Ասաց ու լըռեց: Երկու աչերից
Յողացին արցունք՝ ինչպես ցող երկնից.
Ուժգին ա իս քաշեց անվեհեր սրբունեն
Բայց այդ ախր չէր թըշնամու ահեն:
Գո՛ւցե թե հիշեց նա այդ բուպեին
Տանը անպաշտպան թողած ընտանին
Որ շուտով կընկնին ձեռքը թշնամուն,
Այդ ազատ կյանքեն կերթան գերություն.
Գո՛ւցե նա լացեց Հայի վիճակին,
Անկումը գահին, կորուստը թագին
Որ հազար ու բյուր կըրելով ցավեր,
Անկործան պահեց նոցա շատ դարեր (էջ 66-67):*

Հատկանշական է, որ Ալիշանի պոեմը զերծ է մնացել հայկական և պարսկական բանակների արյունալի տեսարանների անհարկի նկարագրություններից, որովհետև նա կարևորում էր ոչ թե երկուստեք կորուստները, այլ հայրենասիրական ոգու փոխանցումը: Այս տեսանկյունից համոզիչ է Ս. Շտիկյանի այն տեսակետը, ըստ որի՝ Ալիշանին հաջողվել է գեղարվեստական վարպետությամբ պատկերել Ավարայրի ճակատամարտը և խուսանավել իր ժամանակին տարածված այն սխալ մոտեցումից, որ հայերը միայն անխնա կոտորել են պարսիկներին և արյան գետեր հոսեցրել: Ալիշանն իր պոեմում առաջին պլան է մղում հայրենասիրությունը: Նրա գաղափարների ելակետը այն մտայնությունն է, որ հայերը ամենից առաջ պայքարել են

իրենց հայրենիքի ազատության համար¹:

Ինչպես Ալիշանի, այնպես էլ Պատկանյանի պոեմներն ավարտվում են Վարդան Մամիկոնյանի մահով: Ալիշանը ներկայացնում է պատերազմից հետո խաղաղված ռազմադաշտը, որի վրա թնաճում է մեռելային լռությունն ու մահվան ուրվականը: Խավար և մեռելահոտ գիշերային լռության մեջ հայտնվում է Ավարայրի «պլպուլը»՝ Եղիշեն: Երկարատև փնտրտուքից հետո նա հազարավոր դիակների միջից վերջապես գտնում է Վարդան Մամիկոնյանի դին ու գլուխը խոնարհած կանգնում նրա առջև, և համատարած լռության մեջ տարածվում է Եղիշեի՝ սիրտ կեղեքող ողբը.

*«Ո՛հ, ես ի ճակտիդ վրա երդնում, Վարդան,
Կանչեց Եղիշե, որ ձեռքն աստվածյան,
Հոն մեծ փոխարեն է գրեր քո մահվան,
Թե բյուր դարք անցնին, դու մընաս Վարդա՛ն»* (էջ 61):

«Պլպուլն ի թըփեն», դյուրվելով «սիրաձայն հոգու» երգով, դարեր շարունակ փոխանցում է Վարդանանց նահատակների հերոսության երգը.

*Ասաց Եղիշե. հետ արուսեկին
Փախավ ծածկեցավ սիրաձայն հոգին...
Պլպուլն ի թըփեն սովրեցավ Վարդան
Կանչե գրուն գիշերըն՝ Վարդա՛ն, Վարդա՛ն...* (էջ 61):

Հետաքրքիր պատմություն ունի «Պլպուլն Ավարայրի» պոեմի վերջին քառատողի մշակումը: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Ալիշանը պատահականորեն չէր ընտրել պատմական թեման. պատմությունից դասեր քաղելու պատգամը ուղենշում էր պատմության քառուղիներում ժողովրդական հիշողությամբ հարատև գոյատևելու ճանապարհը: Այս տեսանկյունից պոեմի վերջնամասը պետք է լիներ ավելի խոսուն և ամբողջական:

Պոեմի առաջին տպագրության ժամանակ այդ երկտող հատվածը հնչում էր այսպես.

*Կանչե՛ պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Արդեօք գուխտ մահուն սուրբ՝ յիշե՛ Վարդանե՛:*

Այս հատվածի «գուխտ մահուն սուրբ» արտահայտությունը, ընդգրկելով կրոնի համար նահատակության և դրա փառաբանման բովանդակությունը, փոքր-ինչ ստվերում էր պոեմի հիմնական գաղափարը: Պոեմի այդօրինակ վերջաբանը, խիստ սահմանափակելով առաջադրված խնդրի շրջանակը, չէր համապատասխանում պատմական բուն իրականությանը և ոչնչով չէր առնչվում Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի դրությանը: Եթե Ալիշանը այդպես թողներ պոեմի ավարտը, ապա կստացվեր, որ Վարդանը նահատակվել էր ոչ թե իր հայրենիքի փրկության, այլ կրոնի համար:

¹ Տե՛ս Շտիկյան Ս., նշվ. աշխ., էջ 132-133:

² «Բազմավեպ», 1847, հոկտեմբերի 1, թիվ 19, էջ 300:

1858 թ. Ալիշանը, «Պլպուլն Ավարայրի» պոեմը հրատարակելով «Նուագք»-ի հատորներում, վերջին քառատողը շարադրում է այսպես.

*Կանչէ՛ պըլպուլիկ, կանչէ՛ յԱւարայր,
Որ Վարդան հայի յերկնուց այլ ի վայր,
Յիշէ՛ զՀայաստան ըզսիրելին վայր,
Հայաստան յիշէ՛ զՎարդան իւր յամայր¹:*

Թեև այս հատվածը նախորդի համեմատությամբ հաջողված էր, սակայն ուներ ակնհայտ թերություններ: Անմշակ էին հատկապես երկրորդ և երրորդ տողերը, որոնք դեռ կրում էին կրոնի համար զոհվելու մտայնությունը: Ըստ Ալիշանի՝ *պոեմի վերջում երգասաց բլբուլի ձայնը ծանր մրափից արթնության և զգոն լինելու կոչ է լինելու հայության համար, իսկ Վարդանը երկնքից ոգեշնչելու և հսկելու է իր սիրելի Թորգոմյան սերունդների դարավոր երթը:*

Այսպիսով՝ Ալիշանը երկար մտորումներից հետո «Նուագք» ժողովածուի «Հայրունի» հատորի երկրորդ՝ 1867 թ. հրատարակության ժամանակ «Պլպուլն Ավարայրի» պոեմը վերահրատարակում է խնդրո առարկա քառատողի հետևյալ բանաձևմամբ.

*Կանչէ՛ պըլուլիկ, կանչէ՛ հոգեձայն,
Որ յերկնուց ի վայր հայի և Վարդան,
Յիշէ՛ զՀայաստան տուն իւր սիրական,
Հայաստան յիշէ՛ զիւր Կարմիր Վարդան²:*

Թեև Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը նույնպես ավարտվում է Վարդանի մահվան և թաղման նկարագրությամբ, սակայն ուշարժան է հայոց սպարապետի հետնորդների մասին պատկանյանական ընկալումը: Ըստ Պատկանյանի՝ վերջիններս ոչնչով նման չեն իրենց քաջ նախնուն: Հեղինակը, ընկնելով չափազանցությունների, ինչպես նաև պատմական ակնհայտ սխալների խորխորատները, Վարդանանց պատերազմից հետո հայ իրականության մեջ ոչ մի սխրանք այլևս չի տեսնում.

*Կորավ Դյուցազնը, կորավ Հայաստան,
Ջի հայոց միակ հույսն էր քաջ Վարդան.
Թըշվառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետև չըսիրեց ոչով:
Դարք հետև-հետև գրնացին, անցան,
Հիշատակ Քաջին յուրքը մոռացան,
Հեշտության կենաց և գանձի մոլար
Ազնիվ նրպատակն մոռացան իսպառ (էջ 77):*

Ճիշտ է, Պատկանյանի սերնդակիցները քիչ էին աղերսվում V դարի համախմբված գաղափարական պայքարի ակունքներին, սակայն այդ «գանձի

¹ Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուագք, Գ, Հայրունի, էջ 280:

² Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուագք, Գ, Հայրունի, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, ԱՅԺԷ-1867, էջ 332:

մոլար» հասարակության ընդհանուր համապատկերի վրա նշմարվում էին այնպիսի անհատներ, որոնք պատրաստ էին զոհվել հանուն հայրենիքի: Այս անփառունակ իրավիճակի հետևանքով Պատկանյանի օրերի լուսինը հինավուրց և միշտ արդիական իր պատմությունն ավարտում է հոռետեսական տրամադրությամբ.

*Թո՛ղ լրո՛ւն ւ՛ն, լրո՛ւն, ազնի՛վ պատանի,
Այս թը՛շվառ անցքեն միտքըս սասանի,
Քանի կը հի՛շեմ՝ սիրտըս խոցոտի,
Ու ճըմլած հոգիս վրիժու բոցոտի:
...Բսկ Հա՛յր... վա՛յ նրա դառը օրերուն,
Ի՛նչ ունի, բայց թե լոկ ևեթ անուն,
Որը և հաճախ ինքը ամոթից
Զրզված մերժում է իրա վըրայից (էջ 78):*

Պատկանյանի պոեմն ունի նաև վերջաբան, որտեղ հեղինակն ամփոփում է իր գաղափարական ասելիքը: Լուսնի «տըխրամած» դեմքը ռոմանտիկ բանաստեղծին միշտ հիշեցնում է իր ժողովրդի ներկա ծանր վիճակը: Ըստ Պատկանյանի՝ այդ թշվառ և ողբերգական վիճակի ելքը մեկն է. *իր սերնդակիցները պետք է ականջալուր լինեն իրենց նախնիների հայրենասիրական սիրանքներին և այդ ամենով ոգեշնչվեն ներկա դառնադետ օրերում:* Այս մտայնությամբ նա խորհրդանշական պատկերով վերջին անգամ դիմում է լուսնին, որ գոնե նա իր պատմությամբ վառ պահի նախնյաց փառքը և վկայի վերջիններիս հայրենասիրության մասին.

*Ա՛խ, ցոլա՛, փայլե՛, տըխրադեմ լուսին,
Գուցե, քու փայլից փայլ տաս և հային.
Պատմե՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՛նչպե՛ս կորավ հայ ազգի գահը,
Կամ ի՛նչ վե՛հ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը – աշխարհ Հայաստան (էջ 78):*

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է ասել, որ Ավարայրի խորհուրդը յուրաքանչյուր ժամանակաշրջանում նորովի է մեկնաբանվում և երբեք չի կորցնում իր արդիականությունը: Դ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմը նոր և թարմ խոսք էր Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության ճնշող կամարների ներքո: Այս և Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմները դարձան հայկական ռոմանտիզմի երախայրիքները: Թեև ակնհայտ են աշխարհայացքներով և կենսական միջավայրերով տարբերվող հեղինակների ընկալումների որոշ ընդհանրություններ և տարբերություններ, սակայն, այդուհաներձ, թե՛ Դ. Ալիշանը և թե՛ Ռ. Պատկանյանը բարբառում են հայրենասիրության, միասնականության, ազգային ոգու պահպանման և անցյալից ոգեշնչվելու մշտարդիական հարցերի մասին:

Татевик Мерджанян – *Сопоставительный анализ поэмы Гевонда Алишана «Аварайрский соловей» и поэмы Рафаэла Патканяна «Смерть храброго Вардана Мамиконяна»*

Данное исследование посвящено 200-летию юбилею Гевонда Алишана (1820-1901). Автор рассматривает поэму Г. Алишана «Аварайрский соловей» в параллели с поэмой Р. Патканяна «Смерть храброго Вардана Мамиконяна», применяет современные подходы, сравнительно-исторические и сопоставительные методы. Примечательно, что оба автора, исходя из различий своего мировоззрения и жизненной среды, изобразили различные аспекты и идеи Аварайрской битвы. По Алишану, история Вардананц на протяжении веков вдохновляет армян, в то время как Патканян ошибочно пессимистично полагал, что его поколение отделилось от патриотического духа. Тем не менее, несмотря на все достоинства и недостатки, два этих произведения армянского романтизма занимают свое достойное место в истории новой армянской литературы.

Tatevik Merdzanyan – *The Parallel Study of the Poems “The Nightingale of Avarayr” by Ghevond Alishan and “The Death of Brave Vardan Mamaikonyan” by Raphael Patkanian*

The present study is dedicated to the 200th anniversary of Ghevond Alishan (1820-1901). The author observes Gh. Alishan’s poem “The Nightingale of Avarayr” in parallel with R. Patkanyan’s poem “The Death of Brave Vardan Mamikonyan” with the application of modern approaches and historical and comparative methods. It is noteworthy that the two authors, coming out of their historical and political worldviews and differences of their environments, presented the idea of the Battle of Avarayr differently. According to Alishan, Vardanants history has inspired Armenians for centuries, while Patkanyan mistakenly believed from a pessimistic point of view that his contemporaries had retreated from their patriotic spirit. Nevertheless, despite their advantages and disadvantages, the two works of Armenian romanticism have a worthy place in the panorama of modern Armenian literature.

Ներկայացվել է 11.08.2020

Գրախոսվել է 24.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020